Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն՝ Մ. Պետրոսյան

Փոխտնօրեն Մ. Ներսիսյան

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ – ՕՐԱԳԻՐ

2023-2024

# 4-րդ

# ԴԱՍԱՐԱՆ

Դասղեկ՝ Լ.Մելիքյան________

Դասարանի ղեկավարի կամ դասվարի պարտականությունները

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) նպաստում է Հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ.

3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, Հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

5) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ եւ այլ միջոցառումներ.

6) Հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը.

7) արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

Ծանոթ եմ՝ [signature]

## *Սովորողի իրավունքներն ու պարտականությունները*

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ուսուցման [illegible] գիտելիքներ ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

## 2023-2024 ուստարվա դաստիարակչական աշխատանքների նպատակներն ու խնդիրները

- Աշակերտների մեջ սերմանել հարգալից վերաբերմունք միմյանց և շրջապատի նկատմամբ :
- Ձևավորել ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունք:
- Համագործակցելով ծնողների և դասավանդող ուսուցիչների հետ՝ հետևել աշակերտների առաջադիմությանը և վարքին :
- Սովորողների՝ մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ:
- Ստեղծել ապագա քաղաքացու անձի և անհատականության զարգացման համար նպաստավոր պայմաններ:
- Ստեղծել բարենպաստ հոգեբանական միջավայր:
- Ձևավորել աշակերտական կուռ կոլեկտիվ:

# ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՄԵՆՕՐՅԱ-Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները:Հետևել կարգապահությանը, վարքին:Կատարել ամենօրյա ջերմաչափում, հետևել ձեռքերի ճիշտ ախտահանմանը:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ_Դասվարի ժամի կազմակերպում և անցկացում:Աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում:

ԱՄԵՆԱՄՅԱ_Ծնողական ժողովների անցկացում, դասալսումներ:Ամսեկան հաշվետվություն:

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ_Կիսամյակների ամփոփում, բացակայությունների հաշվում: Անձնական գործերի լրացում:

ՏԱՐԵԿԱՆ_Դասագրքերի բաշխում, հավաքում:Տարեկան հաշվետվություն:Աշակերտների բնութագրում: Դասարանական անկյան ստեղծում:

| Դասղեկի գործունեության ոլորտներ | Սեպտեմբեր | Հոկտեմբեր |
|---|---|---|
| 1. Կազմակերպչական աշխատանք | 1.Դասարանի կահավորում ԿԳՄՍ նախարարի հրամանի<br>2. Աշխատանքային պլանի կազմում<br>3. Դասարանական անկյան ձևավորում<br>4. Ծանոթացում դպրոցի կառուցվածքին<br>5. Գրքերի բաշխում | 1. Հետևել գրենական պիտույքների հիգիենային<br>2. Հետևել գույքի խնամքին<br>3. Բացիկի ձևավորում |
| 2. Աշխատանք ծնողների հետ | 1. Ծնողական ժողով<br>2. Ծանոթացում դպրոցի աշխատանքային ռեժիմին | 1. Կրտսեր դպրոցականի ռեժիմը<br>2. Զրույց առողջական խնդիրներ ունեցող աշակերտների ծնողների հետ |
| 3. Ես Հայաստանի քաղաքացի եմ | 1. Իմ իրավունքներն պարտականությունները | 1. Նկարների ցուցահանդես /Իմ հայրենիքը/ |
| 4. Դասղեկի ժամ | 1. Ես դպրոցական եմ<br>2. Հետաքրքիր դասանիշոց<br>3.Ինչպե՞ս խուսափել վիրուսներից<br>4 Կարգապահությունը դպրոցում | 1.Ես և մենք<br>2. Ճանապարհային երթևեկության կանոնները<br>3. Անվտանգությունը տանը և դպրոցում |
| 5. Այլ | 1.Ճանապարհային երթևեկության կանոնները<br>2. Դասասենյակի կանաչապատում՝ ծաղիկների խնամք | 1. Ուսուցչի օր / բացիկի ձևավորում /<br>2. Աշխատանք թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների հետ |

| Դասղեկի գործունեության ոլորտներ | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
| --- | --- | --- |
| 1□ Կազմակենպչական աշխատանք | 1.Հետևել գրենական պիտույքների հիգիենային<br><br>2.Հետևել գույքի խնամքին<br>3.Դասարանական անկյան ձևավորում | 1. Դասարանական անկյան ձևավորում<br>2. Ծաղիկների խնամք՝ նախապատրաստում ձմռանը |
| 2□ Աշխատանք ծնողների հետ | 1.Օգնություն ծնողներին երեխաների ժամանցի կազմակերպման հարցում | 1. Ծնողական ժողով / Ծնողի դերը դաստիարակության գործում/ |
| 3□ Ես Հայաստանի քաղաքացի եմ | <<Հերոս >> երեխաները | Հայաստանի պետական տոները |
| 4□ Դասղեկի ժամ | 1.Մենք սովորում ենք ընկերություն անել<br>2.Զրույց /Դաստիարակություն առանց բռնության/<br>3. Առողջ ապրելակերպը դպրոցականի կյանքում<br>4. Իմ դասարանը իմ երկրորդ տունն է | 1. Բարի խոսքը կատվին էլ է հաճելի<br>2.Աշխարհում շատ կան հետաքրքիր մասնագիտություններ<br>3. Անվտանգ Նոր տարի |
| 5□ Այլ | 1.Ուրախ և անփորձանք հանգիստ<br>2. Պատի թերթ՝ Աշուն է, նախշուն է | 1.Ամանորի հանդես<br>2.Պատի թերթ՝ Նոր տարի |

| Դաստիարակի գործունեության ոլորտներ | Հունվար | Փետրվար | Մարտ |
|---|---|---|---|
| 1.Կազմակերպչական աշխատանք | 1.Դասագրքերի բաշխում | 1. Հետևել գրենական պիտույքների հիգիենային 2. Հերթապահություն դասասենյակում | 1. Հարստացնել դասարանական անկյունը 2. Շաբաթօրյակ |
| 2 Աշխատանք ծնողների հետ | Ծնողական ժողով / ընթացիկ հարցեր/ | Զրույց / կրտսեր դպրոցականի պահվածքը/ | 1.Ծնողական ժողով / Համացանցի և հեռուստատեսության գործում/ 2. Զրույց / Արտաուսումնական պարապմունքներ/ |
| 3 Ես Հայաստանի քաղաքացի եմ | Նկարների ցուցահանդես / Բանակի օր/ | Մուլտֆիլմի դիտում / Սասունցի Դավիթ/ | Էքսկուրսիա Հովհաննես Թումանյանի թանգարան |
| 4 Դասղեկի ժամ | 1.Ով աշխատի, նա կուտի: Մուլտֆիլմի դիտում: 2. Հայրենիքը սկսվում է իմ տնից | 1.Ընտանիք և ընտանեկան արժեքներ 2. 2.Անվտանգությունը տանը և դպրոցում 3. Մեր բնտանի կենդանիները 4.Մուլտֆիլմի դիտում | 1. Խաղ / Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ / 2. Ինչ եմ ուզում դառնալ 3. Ժպիտ |
| 5 Այլ | Աշխատանք ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ | Նկարների ցուցահանդես / Ձմեռ/ | 1.Նկարների մրցույթ / Նվեր մայրիկիս/ 2. Էքսկուրսիա գարնանային այգի |

| Դաստիարակչական գործունեության ոլորտներ | Ապրիլ | Մայիս | Հունիս |
|---|---|---|---|
| 1.Կազմակերպչական աշխատանք | 1.Սանիտարական հարցեր: Օրվա ռեժիմ<br>2. Հերթապահություն դասասենյակում | 1. Գրքերի նորոգում և հանձնում<br>2. Կազմակերպել միջոցառում | Դասարանի հանձնում |
| 2. Աշխատանք ծնողների հետ | Զրույց /Դպրոց-ծնող- աշակերտ կապը/ | Ծնողական ժողով /2023-2024 ուստարվա ամփոփում/ | 2. Երեխաների ամառային հանգիստը |
| 3. Ես Հայաստանի քաղաքացի եմ | Այցելություն հուշարձան՝ ծաղիկների խոնարհում | Մայիսյան տոներ | Երեխաների պաշտպանության օր /կանխարգելում/ |
| 4. Դասղեկի ժամ | 1.Հեքիաթների աշխարհում: Մուլտֆիլմի դիտում<br>2. Ես հայ եմ<br>3.Գեղեցիկը կփրկի աշխարհը<br>4. Լավ և վատ սովորություններ<br>5.Աշխարհին իմ պատուհանից | 1.Զրույց/ Ո՞րն է իմ հայրենիքը և որտեղի՞ց է սկիզբ առնում/<br>2. Իմ փոքրիկ գրադարանը ես եմ հարստացնում<br>3.Բակային խաղեր<br>4. Մենք բնության պաշտպան ենք<br>5.Ինչպե՞ս եմ անցկացնելու ամառային արձակուրդները | Ցտեսություն դպրոց, ողջույն ամառ |
| 5. Այլ | 1.Նկարների ցուցահանդես / Սուրբ Զատիկ/<br>2.Աշխատանք ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ | 1. Էքսկուրսիա /Պատմամշակութային թանգարաններ/<br>2. Էքսկուրսիա / Դեպի թատրոն/<br>3.Էքսկուրսիա/ Դեպի բնություն/<br>4. Շաբաթօրյակ | Ամառային հանձնարարություններ |

## Սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները

1. Սովորողի ծնողն իրավունք ունի՝

1) երեխայի ուսուցման համար ընտրել ուսումնական հաստատությունը և կրթության ձևը.

2) համագործակցել ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով.

3) դիմել համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով.

4) պաշտպանել իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում.

5) մասնակցել հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին.

6) մասնակցել ուսումնական հաստատության ներքին գնահատմանը.

7) մասնակցել ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Սովորողի ծնողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2. Սովորողի ծնողը պարտավոր է՝

1) Երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.

2) հոգ տանել երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.

3) ձևավորել երեխայի արժանապատվության զգացում, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, մարդասիրություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի անդամների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ.

4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ.

5) դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ.

6) սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված դեպքերում երեխային բերել ուսումնական հաստատություն.

7) հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը.

8) սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր ունենալուց:

## *Աշխատանք ծնողների հետ*

1.Ինչ պետք է իմանալ կրտսեր դպրոցականի կազմվածքի մասին:

2.Տանը հետևել օրվա ռեժիմի կատարմանը:

3.Աշակերտների ուսումնական կարողությունների զարգացումը ուսումնական և արտաուսումնական գործընթացում:

4.Ծնողների հեղինակությունը դպրոցում:

5.Ամառային հանգստի կազմակերպում:

6.Աշխատանք առողջական խնդիրներ ունեցող երեխաների ծնողների հետ:

## *Աշխատանք ծնողական խորհրդի հետ*

1.Օժանդակել տաք սննդի կազմակերպման աշխատանքներին:

2.Կազմակերպել էքսկուրսիաներ:

3.Աջակցել միջոցառումների կազմակերպման աշխատանքներին:

4.Ծնողական ժողովների հրավիրում:

5.Աջակցել դասարանի ձևավորման աշխատանքներին: